ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԵՐԷԻՄԱԿԱՆ ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Բանասիրական ընթերցանության «առարկան» Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Մխիթարեան աշակերտաց առ Միրայէլ վարդապետ Շէքեան, բողոք» գրաբար բանաստեղծությունն է. առաջին անգամ այն լույս է տեսել նրա ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական ստեղծագործությունների անդրանիկ ժողովածուում[1], *որի հրատարակությունը, ինչպես հայտնի է, նախաձեռնել է Հովսեփ Շիշմանյան-Սեղենցը։ Նկատի ունենալով այդ բանաստեղծության՝ մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից մեծ կարևորությունը, այն մեջ ենք բերում ամբողջությամբ։*

Մխիթարեա՜նց եմբ աշակերտ,
Վարժեալք նոցուն ի դաստակերտ,
Զի՞ դմեզ առնես արդ դատափետ,
Է՞ Շէքեան դու վարդապետ։

Թէ ոչ վաստակ նոցին գրչաց
Կոփէր զանհաղթ միտս հայազգեաց
Էիր արդ դու եւ Պօրճոնեան,
Բեւին բարձողք ի նաւարան։

Անշուք ծնողաց ի խոր խաւար,
Տգիտութեան, իմաստիւք վառ
Փայլեն որդիքն ի դարուց դարս
Իրրու զվարսամ յաստեղաց պարս։

Դաստիարակ հանուրց ազգիս,
Զսոսա միայն գիտեմք յաստիս,
Իշխե՞ս զուգել նոցին փայլման
Նսեմաստուե՞ր դու, է՞ Շեքեան։

Անիծակո՞ւռ անցին յերկիր
Որք չար խօսին անկարեկիր,
Թող Կայենի առցեն բաժին,
Եղբայրատեացք ի հուր մաշին։

Ցորչափ շընչեմք զօր ի որընգունս,
Հաղայ արիւն մեր յերակունս,
Եւ ցորչափ դայս երգէ Պրէտ,
Մխիթարեանք կեցցե՜ն յաւէտ։

Բանաստեղծությունն ունի «15 օգոստոս, 1852» թվագրությունը. ի դեպ, վերոհիշյալ անդրանիկ ժողովածուում դնտեղված Պեշիկթաշլյանի գործերից միակը, որը թիվ-թվական ունի։ Ի՞նչ փաստերի հիման վրա է նշված այդ թվականը, տարաբախտաբար հայտնի չէ. ժողովածուն հրատարակության պատրաստողներն այդ մասին ոչինչ չեն ասում։ «15 օգոստոս 1852» թվագրությունը, դարձյալ նույն՝ «Մխիթարեան աշակերտաց... բողոք» բանաստեղծության առնչությամբ և դարձյալ առանց որևէ պատճառաբանության, նորից կրկնվում է Պեշիկթաշլյանի չափածո ստեղծագործությունների երկրորդ հրատարակության մեջ (վերոյի առաջարանով)[2] *և այսպիսով այդ թվականը արդեն բաղաքացիական իրավունք է ստանում։ 1904 թ. Փարիզում հրատարակվում է Արշակ Չոպանյանի կազմած և հմտալից ծանոթագրություններով օժտված ժողովածուն*[3], *որն այսօր էլ պահպանում է իր հաստատուն արժեքը։ Այստեղ էլ զետեղված է մեկ հետաքրքրող բանաստեղծությունը Չոպանյանի՝ տողատակում տրված արևմտահայերեն ադատ թարգմանությամբ հանդերձ, առանց, սակայն, վերոհիշյալ թվականի։ Ինչի՞ց ելնելով է կազմողը դուրս թողել այդ թվականը, արդյո՞ք հետևելով է Պեշիկթաշլյանի հետորը «անհամար վրիպակներեն մաքրելու» իր սկզբունքին և «15 օգոստոս 1852»-ն էլ համարել է վրիպակ,— դժվար է ասել։ Ո՛չ հատորին նախորդող փոքրիկ ներածականում և ո՛չ էլ բանաստեղծության առթիվ տրված ծանոթագրության մեջ (էջ 166) այս մասին ոչինչ չի ասված, թեև ինչպես կտեսնենք ստորև, Չոպանյանի մոտեցումը ճիշտ էր։ Չնայած դրան, բանաստեղծի չափածո ստեղծագործությունների հետագա հրատարակիչները*[4], *հիմք ընդունելով անշուշտ 1870 թ. Պոլսի*

---

1 *Տե՛ս* Մ. Պ ե շ ի կ թ ա շ լ յ ա ն. *Տաղք. Կ. Պոլիս, 1876, էջ 43—44։*

2 Մ. Պ ե շ ի կ թ ա շ լ յ ա ն. *Տաղեր. Թիֆլիս, 1903, էջ 81—82։*

3 *Մկրտիչ Պեշիկթաշլյանի քերթվածներն ու ճառերը, ծանոթագրություններով հրատարակեց* Ա. Չ ո պ ա ն յ ա ն. *Փարիզ, 1904, էջ 54—55։*

4 *Տաղք և թատերգրությունք Մկրտիչ Պեշիկթաշլյանի. Նյու-Յորք, 1917։* Մ կ ր տ ի չ Պ ե շ ի կ թ ա շ լ յ ա ն. *Տաղեր, կազմեց Արամ Ինճիկյան. Երևան, 1947։* Մ կ ր տ ի չ Պ ե շ ի կ թ ա շ լ յ ա ն. *Տաղեր, կազմեց Ժիրայր Ավետիսյան. Երևան, 1961 և այլն։*

հրատարակությունը, նորից ու նորից կրկնել են «15 օգոստոս, 1852» թվագրությունը. մի սրընդում, որը, սակայն, ակնհայտ սխալի արդյունք է։ «Մխիթարեան աշակերտաց առ Միքայէլ վարդապետ Շէրեան, բողոք» բանաստեղծությունը թեկուզ հարևանցի կարդալիս, ակնհայտ է դառնում, որ նրա հեղինակը դեռ Մխիթարյան դպրոցի սան է («Մխիթարեա՞նց եմք աշակերտս»), որ դեռ շարունակում է իր ուսումնառությունը նրանց մոտ («Վարժեալք նոցուն ի դաստակերտս») և այլն։ Արդ ստույգ դիտենք, որ Մկրտիչ Պեշիկթաշլյանը Վենետիկի Մխիթարյանների Մուրատյան վարժարանն էր ընդունվել 1839 թ. օգոստոսին, և իր չորս ընկերների հետ (Անտոն Նոֆալյան, Գևորգ Հաճիտեփանյան, Հովսեփ Դահվեճյան և Անտոն Ալանյան), առաջադիմության բարձր ցուցանիշներով, ավարտել էր 1843 թ. սեպտեմբերի 28-ին։ Նշանակում է խնդրո առարկա բանաստեղծության առիթով ասվող-կրկնվող «15 օգոստոս»-ի մասին խոսք լինել չի կարող։ Ամենայն հավանականությամբ այդ թվականը հիշյալ բանաստեղծության՝ մեր հնօրյա պարբերականներից որևէ մեկում հրատարակված լինելու տարեթիվն է, թեև այս կապակցությամբ մեր պղտտումները որևէ շոշափելի արդյունքի չհանգեցրեցին։

Պեշիկթաշլյանի ուսումնառության՝ վերևում հիշատակված ստույգ տարիները, քննության նյութ հանդիսացող բանաստեղծության հետ կապված մի ուրիշ կարևոր ճշգրտում անելու հնարավորություն էլ են տալիս։ Այն է, քանի որ Մկրտիչ Պեշիկթաշլյանը Մուրատյան վարժարանում ուսանել է 1839 թ. օգոստոս—1843 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում, իսկ «Մխիթարեան աշակերտաց, առ Միքայէլ վարդապետ Շէրեան, բողոք» բանաստեղծությունը գրվել է նրա ուսումնառության ժամանակ, ուրեմն այն չէր կարող 1843 թ. սեպտեմբերից ուշ գրված լինել[6]։

Բանասիրական այս փոքրիկ ճշգրտումից հետո անդրադառնանք բանաստեղծությանն ըստ էության։ «Մխիթարեան աշակերտաց... բողոք»-ի առաջին իսկ ընթերցումից ակնհայտ է դառնում, որ Պադուայում գտնվող Մուրատյան վարժարանի ներքին կյանքում տեղի է ունեցել արտաքո կարգի մի իրադարձություն, որի մեջ որոշակի բացասական դեր են ունեցել Պադուայում ապրող ու գործող Հովսեփ Պողոսյան ու Միքայել Շերյան վարդապետները։ Իրադարձությունն այնքան ուժգին է եղել, որ տրտունջ ու դժգոհություն է առաջացրել աշակերտների մեջ, որոնց անունից էլ Պեշիկթաշլյանը գրել է իր բանաստեղծությունը։ Մեղմ, քնքույշ ու լիրիկական Պեշիկթաշլյանը, «գավաճանելով» ինքն իրեն, հանգես է եկել շիտակի մի բանաստեղծությամբ, գործածելով նույնիսկ իրեն այնքան անհարիր կոպիտ ոճեր ու արտահայտություններ (հիշենք երկրորդ բառակում Պողոսյանին ու Շերյանին տրված գնահատականը, որ եթե չլիներին Մխիթարյանները, ապա նրանք Պոլսի նավամատույցում պետք է որպես բեռնակիրներ աշխատեին), իսկ Միքայել Շերյանի աղգանվան կապակցությամբ երկու անգամ և շեշտված ձևով կրկնված «էՀ Շերեան», «էՀ Շերեան» բառախաղը, իր առավել քան թափանցիկ ակնարկով, գալիս է նորից հավաստելու մեր ասածը։ Բանը նույնիսկ հասնում է ուղղակիորեն անեծք կարդալուն (հիշենք հինգերորդ բառակը՝ թող անիծված գետինն անցնեն անսրտաբար չարախոսները, թող

---

5 «Բազմավեպ». 1843, № 19 («Մուրատյան վարժարանին տարեկան քննությունը»)։ Ի դեպ, առաջին անգամ Արշակ Չոպանյանն իր «Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը» աշխատության մեջ (Փարիզ, 1907, էջ 53) և ապա՝ նրա հետևությամբ մյուս ուսումնասիրողները, արձանագրելով այս փաստը, հավատում են, սակայն, որ Պեշիկթաշլյանը Վենետիկից Պոլիս է վերադարձել վարժարանն ավարտելուց երկու տարի հետո՝ 1845 թ.։ Այս կապակցությամբ ունենք «Բազմավեպի» հետևյալ վկայությունը. «Կարևոր է 1843—1846 շրջանին համար նկատի ունենալ, որ Մուրատյան վարժարանի տեսչական մարմինը, որքան որ իր պաշտոնին մնջն էր ի Պադուա, բայց աշակերտները, այն ինչ ավարտած իրենց ուսումները, տարեվերջին կմեկնեին անկե» («Բազմավեպ». 1936, էջ 548), իսկ թե՞ Չոպանյանը և թե՞ հաջորդները, 1845 թ. հավաստող ոչ մի փաստարկ չեն բերում։ Թվում է՝ պետք է հրաժարվել այս կասկածելի 1845 թվականից, որովհետև, վերևում բերված ուղղակի վկայությունից բացի, դժվար էլ է ենթադրել, թե Մուրատյան վարժարանն ավարտելուց հետո, Պեշիկթաշլյանը ամբողջ երկու տարի մնացել էր Վենետիկում, և նրա Պոլիս վերադառնալու ժամանակը համարել 1843 թ. տարեվերջը։

6 Եվ հետևաբար այն ոչ մի առնչություն չունի 1846 թ. սկզբներից Պոլսում, իր գոյությունն սկսած կրթական-մշակութային «Համազգայց ընկերության» հետ, առավել ևս չի հանդիսանում «Ընկերության հակառակորդներին մերկացնող... երգիծական ստեղծագործություն», ինչպես այդ ներկայացրել է Վաչե Սաֆարյանը, և այդ հիման վրա էլ արել է իր ոչ ճշգրիտ եզրակացությունները (տե՛ս Վ. Սաֆարյան. Մկրտիչ Պեշիկթաշլյան. Երևան, 1972, էջ 48—49)։

կաւենի բաժնին արժանանան, թող կրակի մեջ մաշվեն եղբայրատյացները). բանաստեղծական մի վարքագիծ, որը դարձյալ, այնքան նման չէ Պեշիկթաշլյանին, մանավանդ աշակերտական տարիքում։

Արդ՝ ի՞նչ էր տեղի ունեցել Վենետիկի Մխիթարյանների Մուրատյան վարժարանում 1840-ական թթ.։

1834 թ. օգոստոսին, Պադուա ամառանոցային քաղաքում, տասներկու աշակերտներով (հետագայում՝ 22), Իգնատիոս Փափազյանի տեսչությամբ և չորս ուսուցիչներով, իր ուսումնական առաջին տարեշրջանը սկսեց Մուրատյան եռամյա (սկզբնական շրջանում) վարժարանը։ Ճիշտ է, հնգկահայ հարուստներ (ծագումով՝ նորջուղայեցիներ) Էդուարդ-Ռափայել Ղարամյանի և Սամվել-Մկրտիչ Մուրատյանի «հրիտակով» նախորոշված գումարը (1 600 000 ֆրանկ դրամագլուխը) Մադրասի իրավաբանական ատյանի 1832 թ. հուլիսի 7-ի որոշմամբ արդեն փոխանցվել էր Վենետիկի Մխիթարյան միաբանության հաշվին՝ ըստ կտակարարի ցանկության միաբանության ուժերով ու սատարմամբ «հայոց ազգի ազրատ մանկանց համար դպրատուն հիմնադրելու» նպատակով, բայց ամեն ինչ չեղավ այնպես հարթ ու հանգիստ, ինչպես որ սպասվում էր։ Կտակի՝ ուժի կյանքում ներդնելու կազմակերպչական եղանակների և մանավանդ ֆինանսական հարցերի կապակցությամբ կային իրավաբանական բնույթի մեկից ավելի անհիշտ ձևակերպումներ, որոնք սողանցքներ էին թողնում գործի հետ չառնչվող, բայց օգտվել ցանկացող կողմնակիների համար։ Ժառանգություն ստանալու հարցում մեծ եռանդ ու ջանասիրություն դրսևորած՝ Մխիթարյան միաբանության պաշտոնական գործակալ Սարգիս Բեռդորյանը (մեկը, որն այդ գործերի կապակցությամբ Մադրասում նույնիսկ բանտ ընկավ՝ իր արած բաղում դրականով հանդերձ, չկարողացավ համապատասխան դիվանագիտական շրջահայեցություն և հարկավոր հեռատեսություն ունենալ, մանավանդ անգլիական ֆինանսական և դատական-իրավաբանական մարմինների հետ գործ ունենալիս, որի հետևանքով, իրենց վերտահված դրամագլխի տնօրինության հարցում «հրիտակում» անթույլատրելի սպրդումներ էին տեղի ունեցել և այլն[7]։ Հետևանքն այն եղավ, որ Էդուարդ-Ռափայել Ղարամյանի ավագ որդին՝ Ալեքսանդր-Ռափայել Ղարամյանը, օգտվելով իր համար օգուտ քաղելու այն հնարավորություններից, որը հիշված անկատարությունների հետևանքով ընձեռում էր կտակը, լայնատարած արշավանք սկսեց Մխիթարյան միաբանության դեմ՝ ժառանգության հետ կապված այլևայլ հարցեր հարուցելով Ավստրիական կայսրության մեկից ավելի դատարանական և իրավաբանական հաստատությունների առջև և, ի վերջո, գործը հասցրեց մինչև կայսրության արտաքին գործերի մինիստր Կլեմենս-Վենցել Մետերնիխին (Հյուսիսային Իտալիան, այսինքն՝ Լոմբարդո-Վենետիկյան մարզը իր Վենետիկ կենտրոնով, մինչև 1866 թ. ավստրո-իտալական երրորդ պատերազմը գտնվում էր Ավստրիական կայսրության տարածքում)։ Ալեքսանդր-Ռափայել Ղարամյանը Մխիթարյաններին մեղադրում էր իր հոր կտակի գործադրման հարցում կամայականություններ անելու, կրթական հաստատություններ ստեղծելու խնդրում դիտավորյալ միակողմանիության և մանավանդ՝ նոր-նոր իր գոյությունը սկսած Պադուայի Մուրատյան վարժարանում սովորելու համար երեխաներ ընդունելիս շեշտված ձևով խտրականություն հանդես բերելու մեջ։ «Պատմության ծանոթ է,— այս կապակցությամբ գրում էր «Բազմավեպը»,— որ բարերարին մահեն հետո, անոր երեց որդին՝ Ալեքսանդր կմաշեցներ վարդապետներուն ապգանվեր սրտերը, կտակին իրագործման շուրջ իր հարափոփոխ դիտավորությամբ և աննպաստ տրամադրություններովը։ Չենք ուզեր երկարել զայս. ըսենք սակայն, որ միայն Ս. Ղազարու Գիվանին ծանոթ է այն տառապանքը, զոր կրած է վշտաշարշար աբբահայրը (նկատի ունի Սուքիաս Սոմալյանին—Ս. Շ.), հանդերձ իր գործակից վարչությամբ ու պատվիրակներովը»[8]։ Ըստ երևույթին Ալեքսանդր-Ռափայելի՝ այդ խնդրի առնչությամբ բերած փաստարկումները զուրկ չէին որոշ հշմարտություններից, որովհետև Մետերնիխը 1840 թ. օգոստոսի 9-ին, իր կառավարության անունից, բավականին խստաշունչ նամակ-ուղերձով դիմեց Մխիթարյան միաբանությանը և անհապաղ պահանջեց կառավարությանը տեղեկացնել. ա) ինչ միջոցներով է ֆինանսավորվում Պադուայում իր գործունեությունն սկսած Մուրատյան հայկական վարժարանը. բ) պետական-դիվանագիտական ինչ ճանապարհներով է ստացվել վարժարանը ֆինանսավորող

---

7 Ավելի մանրամասն տե՛ս Ս. Թեոդորյան. Պատմութիւն Մուրատեան և Հայկազնեան վարժարանաց. հ. Ա, Փարիզ, 1866, էջ 69 և հտ.։

8 «Բազմավեպ». 1936, էջ 536 (Ի հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց)։

դրամագլուխը և ինչու այդ մասին չի տեղեկացվել ավստրիական կառավարությանը և գ) եթե կտակով նախորոշված դրամագլխի ստացումը կատարվել է օրինական ձևով, ապա այն ամբողջությամբ պետք է հանձնվի ավստրիական կառավարության ֆինանսական վարչությանը, և Մխիթարյան միաբանությունը իրավունք կունենա տնօրինել այդ դրամագլուխը ոչ թե ըստ իր ցանկության ու պահանջմունքների, այլ միայն այն ձևով, ինչպես թույլ կտա Ավստրիական կայսրության կրթության վարչությունը[9]։

Դժվար չէ հասկանալ, որ Մեսերնիխի՝ ուլտիմատումի տոնով ներկայացված պահանջները անելանելի պայմաններ էին ստեղծում ինչպես Վենետիկի Մխիթարյան միաբանության, այնպես էլ, և մանավանդ, իր գոյությունը նոր-նոր սկսած Մուրատյան վարժարանի համար. Որովհետև համաձայնել կատարելու այդ՝ կնշանակեր իրենց վարժարանի հետ կապվող ֆինանսական, վարչատնտեսական կազմի, ուսուցչության, աշակերտների ընդունելության ու նրանց քանակի, ավանդվող առարկաների և այս բնույթի բազում այլ հարցերով զբաղվել միայն և բացառապես այն բանից հետո, երբ կսացվեր ավստրիական կառավարության համապատասխան մարմնի՝ կրթության վարչության՝ պաշտոնական թույլտվությունը, ըստ որում վերջինիս վճռական ձայնի իրավունք էր վերապահված։ Իսկ սա էլ կնշանակեր, որ այնքան դժվարությամբ կյանքի կոչված Մուրատյան վարժարանը մեկընդմիշտ և վերջնականապես դնել «ուս ոտս կայսերութեանն Աւստրիոյ», այստեղից բխող բոլոր անցանկալի հետևանքներով հանդերձ։ Եվ Մխիթարյան միաբանության ղեկավարությունը, հարցը հօդուտ իրենց լուծելու ուղղությամբ կայսրության այլևայլ ղեկավարների և Մետերնիխի հետ կատարված երկարատև և անպտուղ բանակցություններից հետո, հանգում է տվյալ պայմանների համար միակ բանական որոշմանը. այն է՝ Պադուայում գտնվող Մուրատյան վարժարանը փոխադրել Ավստրիական կայսրության աշխարհագրական սահմաններից դուրս։ «Մուրատյան վարժարանի փոխադրության գաղափարը,— գրում էր Ղևոնդ Տայանը,— պաշտոնապես կծանոթացվի առաջին անգամ 1843 թ. փետրվարի 6-ին գումարված Ս. Ղազարու վանական ժողովին մեջ։ Ատենադպիրը կգրե. «Ի Վանական ժողովի միաբան թվեարկութեամբ» կնախընտրեն «փոխադրել զվարժարանն Մուրատ, ի տէրութենէն Աւստրիոյ, բան թէ տալ զհաշիւ համարոյ մատակարարութեան Վարժարանին, զոր պահանջէր տէրութիւնն և կորուսանել զազատութիւն մեր»[10]։

Այսպես ուրեմն, 1843 թ. փետրվարի 6-ից բոլորին, այդ թվում նաև Մուրատյան վարժարանի աշակերտներին, հայտնի էր դարձել կրթական այդ հաստատությունը Պադուայից փոխադրելու մասին Մխիթարյան միաբանության ղեկավարության որոշումը։ Հիշենք, որ նույն այդ 1843 թ. Մկրտիչ Պէշիկթաշլյանը սովորում էր Մուրատյան վարժարանի վերջին՝ ավարտական դասարանում, որը, ինչպես ասացինք, նա ավարտեց այդ թվականի սեպտեմբերին։

Պէշիկթաշլյանի՝ վերոհիշյալ բանաստեղծության աշխարհ գալու հետ առնչվող հարցերի մյուս համախումբը սկսվում է դարձյալ 1849-ական թթ. և սկզբնապես կապվում է այդ թվականներին Պոլսի հայկական կաթոլիկ համայնքում իր գործունեությունն սկսած Հովսեփ Պորճոնյան վարդապետի հետ։ Ծագումով Սեբաստիայի Բրգնիկ գյուղից, նախնական կրթությունն իր ծննդավայրում, ապա Լիբանանի Անտոնյան կաթոլիկ միաբանության դպրոցում ստացած այս անձնամոլությունը 1835 թ. աշխատանքի է անցնում Պոլսում և իր աշխույժ, աչքաբաց մարդագծի շնորհիվ շուտով կարողանում է դառնալ պոլսահայ կաթոլիկ համայնքի նկատելի դեմքերից մեկը։ Մեզ համար կարևորն այն է, որ Հովսեփ Պորճոնյանի մասին խոսելիս նրան աշտապես որակել են որպես «գրություններու (իմա տեսությունների—Ս. Շ.) տեր հոգևորական», որպես «մտքի մարդ մը» և նույնիսկ որպես «փիլիսոփա»[11]։ Հաստատվելով Պոլսում, Պորճոնյանը լայն հնարավորություն է ունենում զարգացնելու իր «գրությունները», իսկ որովհետև պոլսահայ կաթոլիկ համայնքի առավել օրթոդոքս թևը արդեն սկսել էր ձևավորվել որպես ինքնուրույն հասարակական միավոր (որը հետագայում, երբ Անտոն Հասունյանն ընտրվեց նրանց հոգևոր առաջնորդը, ստացավ «Հասունյան կուսակցություն» անվանումը), ի տարբերություն մյուս, համեմատաբար չափավոր կաթոլիկների (որոնք էլ հետագայում պետք է կազմեին «Հա-

---

9 Ս. Թեոդորյան. նշվ. աշխ., հ. Բ. Վենետիկ, 1866, էջ 39—43։ Ս. Արծրունի. Սամվել Մուրադյանի կտակի խնդիրը. Թիֆլիս, 1879. էջ 139։

10 Ղ. Տայան. Համայնապատկեր հարյուրամյա շրջանի Մխիթարյան դաստիարակներու գործունեության. Վենետիկ, 1937, էջ 21։

11 Տե՛ս Հ. Պորճոնյան. Քանի մը մտերմական խորհրդածություններ. Պոլիս, 1853, էջ 35։

հանասունյան կուսակցությունը»), ապա Պորճոնյանի «գրությունները» ուշադրության ու համակրանքի արժանացան։

Անդրադառնանք «Հայազգի հռոմեադավան պարմանիների ուսումնառության» խնդրին, որը Պորճոնյանի համար առանցքային հարցերից մեկն է, և որն իր սուր ծայրով առաջին հերթիս ուղղված է Վենետիկյան Մխիթարյանների Մուրատյան վարժարանի դեմ։ Պորճոնյանի «գրությունը» այս կապակցությամբ հետևյալն է. Մուրատյան վարժարանը, իր գոյության առաջին իսկ օրվանից սկսած, պետք է ունենար խիստ որոշակի հոգևորական ուղղություն և միանգամայն կոնկրետ նպատակներ, այսինքն՝ նա պետք է լիներ միայն և բացառապես կրոնական-կաթոլիկական դպրոց։ Նա պետք է գրազվեր ընդամենը կաթոլիկ հավատի «մյուզիոնարներ» պատրաստելով, որոնք «առարկելով» Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Միջին և Մերձավոր Արևելքի այլևայլ ազգերը, պետք է գրազվեին «ուղղափառ կաթողիկե հավատը» այդ երկների ժողովուրդների մեջ տարածելու գործով։ Սակայն պարզվում է, որ Մուրատյան վարժարանը «խոտոր-խոտորյալ ճանապարհ» Հովսեփ Պորճոնյանի պատկերացրած այս ուղուց։ Հենց սկզբից իսկ այնտեղ դասավանդվում են այնպիսի «ոչինչ գիտություններ», ինչպիսիք են հայ ժողովրդի հին և նոր պատմություն, ազգային դասական և ժամանակակից լեզուներ, հայ գրականություն, հայկաբանություն, երգեցողություն, որի ժամանակ աշակերտներին որոշակի և կայուն հետևողականությամբ սովորեցնում են հայկական երգեր և այլն։ Այդ բոլորը, տհաճությամբ նկատում է Պորճոնյանը, արվում է «ուղղափառ ամենասուրբ կրոնի հետ կող ի կողին» և, որ նրա համար ամենից ավելի սարսափելին է՝ կաթոլիկական գաղափարաբանություն ուսուցանող կրոնագիտությունը միանգամայն հավասար է «բնավին ոչ երբեք արտասանելի և մանավանդ վերադասելի» վիճակում է գտնվում մյուս առարկաների նկատմամբ։ Բնականոն հետևանքն այն է լինում, որ Մուրատյան վարժարանի շրջանավարտների մեջ անվերապահորեն սկսում է գերիշխել ազգայինը, հայրենասիրականը, հայկականը, այնինչ այն պետք է պարզապես չլիներ, լավագույն դեպքում՝ ստորադասված լիներ «ուղղափառ կաթողիկե հավատին»։ Այս էլ իր հետ բերում է մյուս անդանկալին. վարժարանի շրջանավարտները, փոխանակ ավարտելու որպես կաթոլիկ հավատի գործիչներ, ավարտում են որպես հայագետներ, լեզվաբան-բանասերներ, իրենց հայրենիքին ու ազգությանը նվիրված «ազգայիններ» և հիմնականում հենց այդ էլ համարում են իրենց գործունեության նպատակը. մի բան, որն «ուղղափառ» Պորճոնյանի կարծիքով գրեթե մոսենում էր հանցագործության։ «Տեսաբանի» եզրակացությունն այս կապակցությամբ առավել քան որոշակի է։ Պադուայի Մուրատյան վարժարանը կամ պետք է հիմնովին վերակառուցել, հանելով այն բոլոր առարկաները, որոնք նպաստում են աշակերտների մեջ ազգային-հայրենասիրական տրամադրությունների զարգացմանը, կամ (Պորճոնյանն այս վերջինն ավելի ճշմարտացի է համարում) այն պարզապես պետք է փակել[12]։

Մենք այստեղ քննության չենք առնելու Պորճոնյանի վերոբերյալ «գրությունը», որովհետև իր մոլեռանդությամբ այնքան է ակնառու, որ ինքն արդեն խոսում է իր մասին. նշենք միայն, որ հատագայում, երբ պատրիարք դարձած Անտոն Հասունյանը, ի թիվս այլոց, պայքարի դրոշ պարզեց նաև Մխիթարյանների դեմ, իր գաղափարական զինանոցում, գրեթե բառացի ճշգրտությամբ, ուներ Պորճոնյանի հենց այս տեսակետներն ու կարծիքները։ Սակայն այս «գրությունը» իր ժամանակին, ինչպես արդեն ասացինք, ունեցավ իր համակիրներն ու հետևողները, այնուհետև տարածողներն ու տարփողողները, որոնց թվում, որպես առաջիններից մեկին, պետք է հիշել մի այլ կաթոլիկական մոլեռանդ գործչի, Միքայել Շեքյան վարդապետին։ Ծնունդով ամենայն հավանականությամբ պոլսեցի, Շեքյանն էլ, նախորդի նման, իր նախնական կրթությունն ստացել էր Լիբանանում, ապա դարձել էր Լիբանանի Զմմառի հայ կաթոլիկ վանքի միաբան։ 1830-ական թթ. քահանայագործության համար նա արդեն Պոլսում էր, և Պորճոնյանի նման կարողացել էր դրսևորել իրեն որպես հայ կաթոլիկ հասարակության ամենածայրահեղ թևի ներկայացուցիչներից մեկը։ Գաղափարական այս հենքի վրա էլ, անշուշտ, ստեղծվում է նրանց գործունեության ընդհանրությունը, և Շեքյանը շուտով դառնում է Հովսեփ Պորճոնյանի, մանավանդ Մխիթարյաններին ու Պադուայում գտնվող նրանց կրթական հաստատությանը վերաբերող «գրության» ջեմ պաշտպանը (հիշենք Պեշիկթաշլյանի բանաստեղծության առաջին

---

12 Տե՛ս նույն տեղում, էջ 42—50, 62—64։

քաղաքի՝ «Զի՞ գմեզ առնես արդ դատափետ, է՞ Շեքեան դու վարդապետ» տողերը)։ Շերյանի «գաղափարական» գործունեությունը, իր առավել քան ամբողջացված ձևով, հանդես է դալիս հետագայում, երբ Անտոն Հասունյանը «պատրիարքական իշխանությունը ձեռք ձգեց, որուն հոգվով չափ կփափագեր, իր խորհուրդներուն կատարմանը համար»[13], այսինքն՝ պաշտոնապես իր վրա վերցրեց այդ Հայացքների պաշտպանությունը։ Հիշենք, որ նույն թվականին էր, որ Մխիթարյանների և նրանց Մուրատյան վարժարանի դեմ իր գործունեությունն էր ծավալել Ալեքսանդր-Ռափայել Ղարամյանը և նրա հրահրմամբ՝ Մետերնիխը։ Ըստ որում, եթե առաջին դեպքում խոսքը վերաբերում էր ֆինանսական-տնտեսական հաշիվներին և այդ ասպարեզում թույլ տրված անճշտություններին, ապա այս դեպքում մեղադրանքները հասարակական-գաղափարական հենք ու նպատակաուղղվածություն ունեին։ Երկու մեղադրող կողմերը հեշտությամբ գտան իրար, լրացրին մեկը մյուսին և պայմանավորեցին մեկը մյուսով, դրա հետևանքով ավելի միաձույլ ու ամբողջական, հետևաբար ավելի վտանգավոր դարձան։ Այսպիսի միասնական ճակատի դեմ թե՛ Մխիթարյան միաբանությունը և թե՛ Մուրատյան վարժարանի դեկավարությունը ստիպված եղան տեղի տալ...

Առաջին հարվածը հասավ Մուրատյան վարժարանի տեսուչ Սարգիս Թեոդորյանին, որը, վարժարանի գոյությունը իր տեղում պահելու, Պորճոնյան-Շերյան և այլ հակառակորդներին ըստ արժանվույն հակահարված տալու բնագավառում առանձնապես սկզբունքային էր դրսևորում իրեն։ 1837 թ. փետրվարի 10-ին, ստանձնելով վարժարանի տեսուչի պաշտոնը, Թեոդորյանը նոր ուժով ու թափով է շարունակում պայքարը, կռվի հորձանաստուտի մեջ ընդգրկելով նաև վարժարանի քիչ ավելի ձեռնհաս աշակերտներին։ Ինչպիսի ձևեր ու դրսևորումներ է ունեցել այդ պայքարը, մանրամասնությամբ չդիտենք, այսքանն է միայն հայտնի, որ դրա հետևանքը վճռական եղավ հենց իր՝ Թեոդորյանի համար։ 1843 թ. հոկտեմբերի 25-ին նա ազատվում է տեսչի պարտականություններից՝ մեղադրվելով իրեն վստահած աշխատանքները անակնկալ և անհաճո եղանակով կատարելու մեջ[14]։

Հաջորդ «պատժվողը» եղավ վարժարանի աշակերտների սիրելի ուսուցիչներից մեկը, «Հայտնի մանկավարժ և դրամատուրգ», «իր աշակերտներեն պաշտված» Պետրոս Մինասյանը, իսկ Պեշիկթաշլյանով զբաղվող յուրաքանչյուր ոք, սկսած Արշակ Զորպանյանից, անվերապահորեն արձանագրել է այն հանգամանքը, որ Պետրոս Մինասյանը որոշակի դեր է կատարել Պեշիկթաշլյան դրամատուրգի, Պեշիկթաշլյան բանաստեղծի, Պեշիկթաշլյան մշակութային գործի և նույնիսկ Պեշիկթաշլյան մարդու որպես այդպիսին ձևավորվելու ու հասունանալու գործում։ 1839 թ. օգոստոսի 30-ին, այսինքն այն ժամանակվանից, երբ, ինչպես տեսանք, Պեշիկթաշլյանը դարձավ Մուրատյան վարժարանի սան, Պետրոս Մինասյանը ստանձնում է նույն Մուրատյան վարժարանի ուսումնապետի և գրականություն ուսուցչի պարտականությունները, որոնք, ի դեպ, նա վարում էր մեծ բարեխղճությամբ ու եռանդով։ Ոչ պակաս եռանդով սակայն ձանձրացելով վարժարանի տեսուչ Սարգիս Թեոդորյանին, նա հանդես էր գալիս պաշտպանելով տեսչի տեսակետները՝ հօգուտ վարժարանի և ընդդեմ նրա հակառակորդների և այս էլ, ի վերջո, վճռեց նաև նրա ճակատագիրը։ Իր ուսուցչական գործունեությունը վարժարանում շարունակելով շուրջ վեց տարի, Պետրոս Մինասյանն էլ շուտով մեղադրվում է որպես «դասկածավոր» և ազատվում «աշխատանքից», մի բան, որի մեջ արդեն որոշակի էր Հովսեփ Պորճոնյանի ստոր դերը։

Իրենց սիրելի ուսուցիչներին և մանավանդ Պետրոս Մինասյանին հեռացնելուց հետո պետք է ծայր առնեին աշակերտական խռովությունները։ Պադուայի Մուրատյան վարժարանում տեղի ունեցած աշակերտական, բավականին նշանակալից բնույթ ունեցող, խռովությունների մասին ակնարկում են հենց իրենք՝ Մխիթարյան հեղինակները, թեև, հասկանալի պատճառով, ոչ այնքան մանրամասնորեն։ Բոլոր աղբյուրներն էլ խռովությունների սկիզբը դնում են միևնույն ժամանակը, այն է՝ 1843 թ. փետրվար։ Գիտենք արդեն, որ դա այն ժամանակն էր, երբ աշա-

---

13 Հ. Ասկերյան. Հասունյան քաղաքականություն. Տփղիս, 1868, էջ 58։

14 Ս. Թեոդորյան. Պատմութիւն Մուրատեան վարժարանին... հ. Ա, Փարիզ, 1857։ Նույնի՝ Պատմութիւն Մուրատեան եւ Հայկազնեան վարժարանաց. հ. Բ, Վենետիկ. 1866, էջ 28—38։

կերտներն իմացան, որ որոշված էր իրենց վարժարանը Պադուա ջաղաքից փոխադրել Փարիզ, և դա այն ժամանակն էր, երբ Պեշիկթաշլյանը ուսանում էր վարժարանի ավարտական դասարանում։ Իսկ այս հանգամանքը, Մուրատյան վարժարանի աշակերտների խռովության փաստը նորանոր տվյալներով համալրելուց բացի, մեզ համար կարևոր է նաև հետևյալ առումով։ Քանի որ աշակերտական խռովությունները ծայր էին առել 1843 թ. փետրվարից, իսկ Պեշիկթաշլյանը վարժարանը ավարտել է նույն թվականի սեպտեմբերին, հետևաբար «Մխիթարեան աշակերտաց, առ Միրայէլ վարդապետ Շէքեան, բողոք» բանաստեղծությունը պետք է գրված լինի 1843 թ. փետրվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում և ուրեմն 15-ամյա Պեշիկթաշլյանի առաջին չափածո ստեղծագործություններից մեկն է, թերևս գրական երախայրիքը։

Վերևում ասվածից հետո արդեն հասկանալի է դառնում Պեշիկթաշլյանի վերոհիշյալ բանաստեղծության ամբողջ ենթաբնագիրը։ Հասկանալի է դառնում, թե աշակերտների ո՞ր խմբի անունից էր հանդես գալիս տասնհինգամյա բանաստեղծը, ինչո՞ւ էր նրա խոսքի սուր ծայրն ուղղված Վենետիկի Մխիթարյան միաբանության հետ անմիջական կապ չունեցող Պորճոնյան և Շեբյան վարդապետների դեմ, որո՞նք էին ուսանողական-հասարակական բնույթի այն ներքին շարժառիթները, որ այդ բանաստեղծության «ծնունդի» պատճառը հանդիսացան և այն. ենթաբնագիր, որի մասին առ այսօր ոչինչ հայտնի չէր։

Ի՞նչ դեր է կատարել բանաստեղծությունը վարժարանի հետ առնչվող դեպքերի վերոհիշյալ շղթայում, արդյո՞ք որևէ ազդեցություն կամ հետևանք է թողել հոգուտ կամ ի վնաս պայքարող այս կամ այն կողմի, դժվար է ասել։ Մի բան, համենայն դեպս, որոշակի է. հակառակորդ կողմը ի վերջո կարողացել է հաղթանակի հասնել։ 1843 թ. սեպտեմբերից, այսինքն այն ժամանակվանից, երբ Մկրտիչ Պեշիկթաշլյանն ու իր չորս ընկերները ավարտեցին Մուրատյան վարժարանը, վերջինս դադարեցրեց իր գոյությունը։ Եվ չնայած քիչ ջանքեր չթափվեցին կրթական այդ հաստատությունը նորից վերականգնելու համար, չնայած այն բանին, որ «ոգի ի բոին» աշխատում էր միաբանության արբահայր Սուքիաս Սոմալյանը, բայց ամեն ինչ անօգուտ անցավ։ Պադուայի Մուրատյան վարժարանը վերսկսեց իր կրթական-մանկավարժական գործունեությունը չորս տարի հետո, 1847 թ. աշնանը, արդեն Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում և բոլորովին այլ պայմաններում[15]։

Այս բոլորից հետո հնարավոր է, որ Պեշիկթաշլյանի «Մխիթարեան աշակերտաց, առ Միքայէլ վարդապետ Շէքեան, բողոք» բանաստեղծությունը չստանար գրական-հասարակական այն մեծ հնչեղությունը և հետևաբար այնպիսի մեծ հետաքրքրություն չհարուցեր ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում, եթե մի քանի տարի անց, նշանակալից մի եղելություն նոր լիցք ու ընթացք չհաղորդեր դեպքերին, այն է՝ «Պատասխանի առ քերդող» խորագիրը կրող սրամտաբան բանաստեղծությամբ Պեշիկթաշլյանի հիշյալ գործին ի պատասխան հանդես եկավ Ղևոնդ Ալիշանը։

Այն հանգամանքը, որ Ալիշանը իր ժամանակին մի բանաստեղծություն է գրել, կապված Պեշիկթաշլյանի հետ, բանասիրությանը հայտնի էր դեռ վաղուց, թեև նրա գոյության բուն շարժառիթը մնում էր անհայտ։ Պեշիկթաշլյանով մանրակրկիտ զբաղված Ա. Զոպանյանը այս կապակցությամբ հետևյալն է գրում. «Ալիշանին քերթվածը սակայն... պատասխանն ըլլալու է նամակի մը, զոր Պեշիկթաշլյան դրած է Ալիշանին. դժբախտաբար չկրցանք ստուգել, թե ինչ խնդրոյ առթիվ է, որ Պեշիկթաշլյան դիմած էր Ալիշանին»[16]։ Բանասերի թեական տոնով հայտնված կարծիքը ինքն արդեն խոսում է իր անհաստատ լինելու մասին, իսկ Ալիշանի հիշյալ բանաստեղծության հանգամանալից քննությունը անվերապահորեն բերում է միայն մեկ եզրակացության, որն արդեն ասացինք, այն է՝ Ալիշանը պատասխանել է Պեշիկթաշլյանին։

Ի՞նչն է մեզ հիմք տալիս սման եզրակացության համար։

Ասացինք արդեն, որ գրելով իր կրքոտ ու հախուռն բանաստեղծությունը, Պեշիկթաշլյանը շատ էլ մեծ ընտրություն չի դրել գեղարվեստական արտահայտության ձևերի մեջ, հասնելով

---

15 «Բազմավէպ». 1847, N 23 (Հանդես հարցաքննության Մուրատյան վարժարանին)։

16 Ա. Զոպանյան. նշվ. աշխ., էջ 164։

նույնիսկ իր հակառակորդներին անեծքով դատապարտելու աստիճանին (տե՛ս բանաստեղծության 5-րդ քառյակը)։ Ալիշանի «Պատասխանի առ քերդող» բանաստեղծության մեջ կարդում ենք.

Զկարկրտածուս ոչմի՞ սպառնաս կրոկլտել ։ ծոցս ամպրոպաց,
Եւ ո՞ւր ուսար անէծք կարդալ և օրհնութիւն պահանջել։

Դժվար չէ նկատել, որ ալիշանյան այս տողերը ուղղակի պատասխան են Պեշիկթաշլյանին։ Դամ, ահա «Պատասխանի առ բերդող» բանաստեղծության հետևյալ տունը.

Թեւ ի թիկունս, թեւ ի թիկունս, դարձիր յայերս հեղանոց,
Անդ սրլացիր, անդէն թրոիր ու մրրկաց երթ փախիր։
Այլ ուստի՞ քեզ իդձ երգոց թուլագաշնակ ի բնարէ,
Ի հուրատան ասպարիզի ճեմողիդ զի՞նչ պետք կալ ծիր,
Որ ձայնափող խեղճ խմբից լիցիս երգով բողոքից[17]։

Եթե միայն նկատի ունենանք բանաստեղծության վերջին տողը, որտեղ Ալիշանը նշում է «բողոքի երգը» (հիշենք, որ Պեշիկթաշլյանի բանաստեղծության վերնագիրն էր «Մխիթարեան աշակերտաց առ Միքայել վարդապետ Շէրեան, բողոք»), ապա այս դեպքում էլ բերված տունն այնքան որոշակի է, որ այլևայլ մեկնաբանություններն ավելորդ են։

Համանման մի քանի փաստեր էլ կբերենք ստորև, Ալիշանի հիշյալ «Պատասխանի առ քերդող» բանաստեղծության վերլուծության կապակցությամբ, իսկ այդ վերլուծությունն անել առավել քան անհրաժեշտ է, որովհետև դրանով մի տեսակ ավարտվում են Պեշիկթաշլյանի «Մխիթարեան աշակերտաց...» բանաստեղծության հետ առնչվող խնդիրները։

Ղևոնդ Ալիշանն իր բանաստեղծությունը գրել է այն ժամանակ, երբ նա արդեն մի քանի տարի էր, ինչ պաշտոնավարում էր Մխիթարյան միաբանության մյուս՝ Ռափայելյան ադդային վարժարանում որպես պատմություն և բարոյականություն առարկաների ուսուցիչ, շուրջ մեկ տարի էր, ինչ վարում էր այդ վարժարանի տեսուչի պարտականությունները, և այդ բոլորի հետևանքով արդեն կարողացել էր նվաճել բանիմաց մանկավարժի և իր աշակերտների կողմից ջերմորեն սիրված ուսուցչի համարումը։ Նա արդեն հեղինակ էր ոչ քիչ թվով գրաբար բանաստեղծությունների, որոնք կարդացվում էին Միաբանության ներսում տեղի ունեցող զանազան հանդիսությունների ժամանակ, դրանցից մի քանիսն էլ հրատարակվել էին Մխիթարյան միաբանության պարբերականի՝ «Բազմավեպի» էջերում և արժանացել էին տարեկից և ավագ հայրերի գրվատական գնահատականին։ Դրանով հանդերձ՝ նա միանգամայն օրինավոր Մխիթարյան էր, ըստ ամենայնի նախանձախնդիր Միաբանության ներքին կարգապահության պահպանմանը, և բնականաբար, անդիջում հակառակորդն այն ամենի, ինչ այդ տեսանկյունից կարող էր գեթ փոքր չափով խափանարար հանդիսանալ «Մխիթարա տան»՝ հնուց անտի հաստատված «անստերյուր ընթացքին»։ Ուստի հասկանալի է, որ Մուրատյան վարժարանում ծայր առած աշակերտական խռովությունները և մանավանդ Մկրտիչ Պեշիկթաշլյանի «ընթացքը» ամենևին էլ չէին կարող դուր գալ կարգապահասեր և օրինապահ Ալիշան վարդապետին։ Այս հանգամանքն էլ, ահա, «լիցքավորել է» Ալիշանին, հանդես գալու համար վերոհիշյալ «Պատասխանի առ բերդող» բանաստեղծությամբ։

Ավելի հանգամանալից լինելու համար նշենք, որ նման՝ Մխիթարյան գրականագետների բառով ասած՝ «դիմողական» բնույթի ստեղծագործությունները ամենևին էլ հազվագյուտ չեն Ալիշանի ստեղծագործական կյանքում։ Նշվում է, օրինակ, միաբանության անդամ Դավիթ Ճերմակյանի քահանայության հոբելյանը, և Ալիշանը հանդես է գալիս երկու բանաստեղծությամբ («Ի յոբելեան քահանայութեան Հօր իմոյ հոգևորի» և «Ի յոբելեան քահանայութեան»), Գևորգ Հյուրմյուզյանը ընտրվում է միաբանության աբբահայր, և այս առիթով «Ի նորընծայ գահակալ Մխիթարայ...» բանաստեղծությամբ Ալիշանն իր հիացմունք է հայտնում, և այլն[18]։

---

17 Ղ. Ալիշան. Նուագք. հ. Բ, Վենետիկ, 1857, էջ 52—53։
18 Նույն տեղում, էջ 22 և հտ.։

Ալիշանի «դիմողական» բանաստեղծությունները կառուցված են գրեթե նույն ձևով, լեզվաոճական նույն հնարանքներով, հաճախ միևնույն ոճի, կամ գեղարվեստորեն լավ գտնված պատկերի կրկնությամբ, սակայն բոլոորովին էլ այդպիսին չէ քննարկվող «Պատասխանի առ քերդող» բանաստեղծությունը։ Այստեղ Ալիշանը, Պեշիկթաշլյանի նման, «դավաճանել է» ինքն իրեն և հանդես է եկել մի բանաստեղծությամբ, որը կտրուկ տարբերվում է իր իսկ «դիմողական» ժանրի մյուս գործերից և այսպիսով դառնում է ինքնատիպ երևույթ Ալիշանի ողջ պոեզիայում։ Ամբողջ բանաստեղծության մեջ խոսողը՝ խիստ ու պահանջկոտ, բայց և հոգատար ուսուցիչն է, որը հորդորելով ու բացատրելով, իսկ ոչ սակավ դեպքում՝ նաև կշտամբելով, «մշակում է» դանցանքներ թույլ տված իր շարաճճի սանիկին, մեկ առ մեկ մատնացույց անելով նրան իր արարքի վտանգավորությունը և նշում է այն ճանապարհը, որը ավելի ճիշտ ու տրամաբանական է նրա համար։ Իսկ անհնազանդ սանիկի սխալը, ըստ Ալիշանի, ծնվել է այն բանից, որ՝ «Յանդրագոյնս քան զքեզ հանդգնեցար, պարմանի»։

Մեղադրանքի ներքին բովանդակությունն, այսպիսով, արդեն հասկանալի է. «պարմանին» հանդգնել է անել ավելին, քան իրեն թույլատրվում է, հանդգնել է դուրս գալ Միաբանության կյանքում վաղուց սրբագործված ու անբեկանելի համարվող ներքին օրենքների դեմ։ Այդպիսի հանգանքի համար անհնազանդ սանիկին կարող են պատժել, ասենք՝ ներման չի կարող արժանանալ նաև տարեցը։ Ալիշանը քաջ գիտե այդ, բայց գիտե նաև, որ ինքը գործ ունի բանաստեղծի քանքարով օժտված մի պատանու հետ։ Հենց այն հանգամանքը, որ նա, իր բանաստեղծության մեջ Պեշիկթաշլյանին է դիմում «քերդող» բառով, ցույց է տալիս, որ Ալիշանը շատ լավ գիտե իր «պարմանու» պոետական կարողությունները։ Այդ է պատճառը, որ մանկավարժ Ալիշանը, պատանուն կշտամբելուց հետո, միաժամանակ հոգածու կերպով մատնանիշ է անում այն ուղին, որով պետք է ընթանա Պեշիկթաշլյան բանաստեղծի հետագա զարգացումը, պետք է բանաստեղծել, ոչ թե մի խումբ խեների ձայնավորը դառնալով, ոչ թե գրել գործեր, որոնք թուլանվագ քնարին բնորոշ սրտագրանքներ են, այլ ստեղծագործել՝ հիմք ունենալով Մասյաց դարավանդներն ու նրա շուրջը գտնվող գյուղացուններին, պետք է երգել հայրենիքի հին սրխրանքները փառաբանող երգեր, գովերգել «աստեղաշկունք» հայկազուններին ու նրանց սրխրանքները, երգեր հյուսել «նոաթևյանը» քաջաբար օգտագործած նահատակների վերաբերյալ և այլն.

Մերթ ի Մասեաց դարեւանդ, առ ստորոտով մերթ նորին,
Երգեցեք երգ դիւցազանց. երգ հայրենի, երգ գորով.
Անդ շարժեսցին ճապուկ ձրգանք ձեռաց յանդուլ երգարան,
Եւ թէ ներկուռ երաժշտաց խոնջին ստեղունք հնգածդի,
Կաղամախեաց եւ հանգոյ կախ դալարագգեստն ըզբազկաց
Տատանեսցին հայկեան բամբռունք ի սոյլ հողմոյ հայրենոյ...
Անդ համօրէն պար բոլորեալ առաքինի հայութեան
Անկցէ զձեռք դաս առ դաս հուր նոր շնչել ի ձեզ հայրենի։

Այս է Ալիշանի պատգամը և որոշակի պահանջը պատանի Պեշիկթաշլյանից, այսինքն՝ այժմյան ոճով ասած՝ անցնել պատմական թեմատիկայի։ Ի դեպ, այս պահանջը հարուցվում է ոչ միայն Պեշիկթաշլյանի նկատմամբ, այլև բոլոր երիտասարդ ստեղծագործողների, որոնք՝

Ապոլլովնեան կապարճ ի յուս՝ մանկունք քերդողք աղեղանց,
Ամենուրեք ձեզ նպատակք, ելէ՛ք կայտառք դուք ի յորս։

Պատմական թեմատիկան ստեղծագործության նյութ դարձնելու Ալիշանի խրատ-հանձնարարականի արձագանքները, մասնավորապես Պեշիկթաշլյանի կապակցությամբ, որոշակիորեն ակնհայտ են դառնում, երբ քննում ենք վերջինիս գեղարվեստական ստեղծագործությունները. Այստեղ կրոնական («Նուագ ի մահն Յիսուսի», «Ի բերանոյ մանկան առ պաշտպանուհին»), էպիտաֆիկ («Տապանագիր վաղամեռիկ մանկան», «Ի տարաժամ մահ Գաբրիելի Երամյան»), իր ժամանակի հուզող հարցերին նվիրված («Եղբայր եմք մեք», Զեյթունի հերոսամարտին

նվիրված շարքը, «Դիշեր») և ուրիշ՝ այս նպատակուղղվածությունն ունեցող բանաստեղծությունների կողքին, ամենևին էլ փոքր մաս չեն կազմում «Ի նահատակութիւն Վարդանանց», «Երգ Հայրենի», «Հրաւէր ի մարտ խոսողու մեծի», «Զրօսանք Արտաշէսի առաջնոյ» և նման բանաստեղծությունները, որոնց նյութը, ինչպես արդեն երևում է նույնիսկ վերնագրերից, հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագներն են։ Փաստն այնպիսին է, որ ինքն արդեն խոսում է իր մասին և համապատասխան բացատրությունների կարիք չունի։

Պեշիկթաշլյանի մեկ բանաստեղծության, վերոհիշյալ «Մխիթարեան աշակերտաց, առ Միրաւ։ վարդապետ Շէրեան, բողոք»-ի գրական-բանասիրական այս վերլուծությունը, կարծում ենք, հետաքրքրական և ուշագրավ նոր կողմեր է բացահայտում։

ОБ ОДНОМ САТИРИЧЕСКОМ СТИХОТВОРЕНИИ МКРТИЧА ПЕШИКТАШЛЯНА

С. А. ШТИКЯН

Резюме

Сатирическое стихотворение М. Пешикташляна «Протест учеников-мхитаристов к монаху Микаэлу Шекяну», датируемое 15-м августа 1852 года, впервые было издано в посмертном сборнике поэта «Напевы» (1870 г.). В статье доказывается, что на самом деле оно было написано в феврале—сентябре 1843 года. Анализируется общественно-политическая ситуация, предшествующая написанию стихотворения, а также довольно неблаговидная деятельность Микаэла Шекяна в отношении учеников-мхитаристов школы «Мурадян». Стихотворение получило широкую известность еще и потому, что вскоре с «ответом поэту» выступил Гевонд Алишан. Он подверг строгой критике Пешикташляна за допущенные им «погрешности» и заботливо указал тот путь, которым, по мнению Алишана, должно развиваться дальнейшее творчество Пешикташляна.